

**Արցախյան 44-օրյա պատերազմի արձագանքը
«Ժամանակ» օրաթերթում**

Տառայնա Օհանյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2024.1-172>

Հանգուցային բառեր. *Արցախյան հակամարտություն, միջազգային արձագանք, բանակցային գործընթաց, ԵԱՀԿ Մինսկի խումբ, Ադրբեջան, Թուրքիա*

Նախաբան

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը հարձակում սկսեց Արցախի շփման գծի ողջ երկայնքով, որը տևեց 44 օր: 2016 թվականի Ապրիլյան պատերազմից հետո սա առաջին լայնածավալ հարձակումն էր, որի հետևանքով հայկական կողմը կորցրեց Արցախի տարածքի շուրջ 75 %-ը: Այս իրադարձությունները լայն արձագանք գտան Մերձավոր Արևելքի հայկական մամուլում, որի դիրքորոշումը հայ պատմագիտության կողմից ուսումնասիրված չէ: Սույն հոդվածում փորձ է արվում ցույց տալ Թուրքիայում լույս տեսնող հայկական «Ժամանակ» թերթի դիրքորոշումը հայ-ադրբեջանական պատերազմի վերաբերյալ: Ուսումնասիրության թեման արդիական է, քանի որ արցախյան հարցը մինչ օրս լուծված չէ ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա, և Արցախն անարդարացիորեն բռնակցված է Ադրբեջանին:

«Ժամանակ» օրաթերթը

«Ժամանակ»-ը գրական, ժողովրդական, հասարակական-քաղաքական օրաթերթ է, որը լույս է տեսնում 1908 թվականից Կ.Պոլսում: Օրաթերթը լուսաբանում է թուրքահայ համայնքի կրթական, գրական-մշակութային, եկեղեցական կյանքը, անդրադառնում է Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության ներքին ու արտաքին քաղաքականությանը, մասնավորապես՝ հայ-թուրքական հարաբերություններին, տնտեսական առաջընթացին, մշակութային նորություններին, նպաստում է Հայրենիք-Միություն կապերի ամրապնդմանը: «Ժամանակ»-ն արտատպում է նյութեր արևմտյան և թուրքական մամուլից, պարբերաբար տպագրում է հայագիտական նյութեր, նմուշներ հայ և համաշխարհային գրականությունից [1, 434]:

44-օրյա պատերազմը

Անդրադառնալով 44-օրյա պատերազմին նախորդող իրադարձություններին՝ «Ժամանակ» օրաթերթն առաջ է քաշում այն միտքը, որ 2020 թ. հուլիսին Ադրբեջանի հետ Տավուշի սահմանային մատուց տեղի ունեցած կարճատև զինված բախումը հետագայում պատճառ հանդիսացավ լայնածավալ պատերազմի սանձազերծման:

«Ժամանակ» օրաթերթի ունեցած տեղեկություններով՝ 2020 թ. հուլիսին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը լրատվամիջոցներին տված հարցազրույցում նշում է, որ ադրբեջանական կողմը չի փոխում իր դիրքորոշումը, քանի որ «պատմական արդարությունն իրենց կողմն է, հակամարտությունը պետք է լուծվի Ադրբեջանի տարածքային ամբողջականության հիման վրա, և մենք չպետք է թույլ տանք, որ ստեղծվի հայկական երկրորդ պետականություն Ադրբեջանի հողերի վրա» [2, 1]:

Թերթն ուշադրություն է դարձնում այն բանի վրա, որ Ադրբեջանի նախագահն իր խոսքում քննադատում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների գործունեությունը, դժգոհում, որ նրանք չեն արձագանքում Հայաստանի վարչապետի՝ «Արցախը Հայաստան է և վերջ» հայտարարությանը: Ըստ Բ. Ալիևի՝ «այդ հայտարարությունը ձայնորոն և անիմաստ է դարձնում բանակցությունները» [2, 1]:

«Ժամանակ»-ն ընդգծում է, որ Հայաստանի Հանրապետության վարչապետ Ն. Փա-

շինյանի մամուլի խոսնակ Մ. Գրիգորյանը, պատասխանելով Ի. Ալիևի հայտարարությանը, նշում է, որ Արցախի հարցի չկարգավորվելու համար Ադրբեջանի նախագահը մեղադրում է ԵԱՀԿ Մինսկի խմբին, մինչդեռ պետք է մեղադրի ինքն իրեն, քանի որ վաղուց հեռացել է քննարկումների դաշտից:

Ի պատասխան Ալիևի այն մտքին, որ Ղարաբաղի հարցն ունի ռազմական լուծում, հայկական կողմը նշում է, որ եթե հարցն ունի ռազմական լուծում, հետևաբար Արցախի քաղաքացիները վաղուց լուծել են այդ հարցը:

2020 թ. հուլիսի 10-ին Երևանում գումարված Հայաստանի Ազգային անվտանգության խորհրդի նիստի ժամանակ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդես եկավ ուշագրավ հայտարարությամբ՝ նշելով, որ «մենք մերժում ենք քաղաքակրթությունների բախման կանխավարկածը, միջազգային հարաբերություններում կողմ ենք քաղաքակրթությունների երկխոսության և Հայաստանը պատրաստ է դառնալ նման երկխոսության հարթակ» [3, 4]:

2020 թ. հուլիսի 12-ին, ժամը 12:30-ի սահմաններում Ադրբեջանի զինված ուժերը հարձակում սկսեցին Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի ուղղությամբ: «Ժամանակ»-ն անդրադառնում է այդ կապակցությամբ թե՛ հայկական, թե՛ ադրբեջանական պաշտպանության նախարարությունների հրապարակումներին: Թերթը շեշտում է, որ Հայաստան-Ադրբեջան սահմանի լարվածությանը զուգահեռ Արցախ-Ադրբեջան շփման գծի երկայնքով տիրում է հարաբերական հանգիստ:

«Ժամանակ»-ն «Անկարայի արձագանք» բաժնում մեջբերում է թուրքական «Անատոլու» գործակալության տարածած լրատվությունը, ըստ որի՝ Թուրքիան քննադատում է հայկական զինված ուժերի կողմից ադրբեջանական Թովուզի վրա հարձակումը և հայտարարում է, որ իր բոլոր հնարավորություններով պետք է աջակցի Ադրբեջանին:

«Ժամանակ»-ը ոչ միայն մանրամասն ներկայացնում է Թուրքիայի դիրքորոշումը, այլև ընդգծում է, որ վերոհիշյալ հայտարարությունը հիմնված է Ադրբեջանի կողմից հրապարակված պաշտոնական տեղեկատվության վրա [4, 4]:

«Օրվա մտորումներ բաժնում» «Ժամանակ»-ը ներկայացնում է իր թղթակից Ս. Արյանի «Տավուշի ռազմական մագլցումը՝ առիթ մեծ մտավախությունների» հոդվածը: Հեղինակը մտավախություն է հայտնում, որ Տավուշի հուլիսյան դեպքերը դարաբաղյան հակամարտության «մեծ թղթածրարը Հայաստանի Հանրապետության սահմաններ կտեղափոխի» [5, 1]:

Ս. Արյանի կարծիքով, եթե հակամարտող կողմերը չհետևեն ԵԱՀԿ Մինսկի խմբի հորդորներին, ապա դա լուրջ հետևանքներ կարող է ունենալ հայկական կողմի համար: «Կը մնայ յուսալ,- գրում է նա,- թե պատերազմի պատրոյգ պարունակող Տաուշի դեպքը շրջանցուի՝ յենլով շինիչ մտեցումներու վրայ» [5, 1]:

Հուլիսի 18-ին Մինսկում Հայաստանի Հանրապետության վարչապետ Ն. Փաշինյանը հայտարարեց, որ Ադրբեջանի չի կարող Հայաստանին ստիպել չհիմնավորված և միակողմանի զիջումներ անել Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցի շուրջ: Նրա խոսքով՝ «հակամարտությունը չունի ռազմական լուծում և խաղաղ կարգավորման բանակցությունները անայլընտրանք են: Սա կհամապատասխանի տարածաշրջանի բոլոր ժողովուրդների շահերին» [6, 4]:

Մեպտեմբերի 14-ի համարում «Ժամանակ»-ը, «Օրվա մտորումներ բաժնում» անդրադառնալով արցախյան հիմնախնդրին, կարծիք է հայտնում, որ արևմտյան երկրները կարծես թե շատ չեն հետաքրքրված, որ Հայաստանը և Ադրբեջանը շարունակեն խաղաղ բանակցությունները: Թերթն անդրադառնում է Ադրբեջանում ԱՄՆ-ի նախկին դեսպան Մեթյու Բրայդայի հոդվածին, որտեղ նա ադրբեջանամետ դիրքերից առաջ է քաշում այն միտքը, որ դարաբաղյան հիմնախնդիրը պետք է լուծվի գլխավորապես Ռուսաստանի, ինչպես նաև Թուրքիայի ջանքերով:

Ինչ վերաբերում է ԵԱՀԿ Մինսկի խմբի միջոցով արցախյան հակամարտությունը կար-

գավորելուն, ապա «Ժամանակ»-ը նկատում է, օգոստոսի 14-ին Ն. Փաշինյանը BBC-ին տված հարցազրույցի ընթացքում նոր մտտեցում է առաջ քաշում: Նա հայտարարեց, որ ինքը հրաժարվում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հիմնական սկզբունքներից, որոնք համաձայնեցված էին Մինսկի խմբի կողմից և որոնց հետ իր նախորդը (Սերժ Սարգսյանը) ոչ պաշտոնապես համաձայնվել է 2009 թ. հունվարին: Ըստ թերթի, եթե Ն. Փաշինյանը նոր պահանջ է առաջ քաշում, ապա Ադրբեջանի նախագահ Իլիամ Ալիևը մտադիր չէ շարունակել Հայաստանի հետ «անիմաստ բանակցությունները»: «Ժամանակ»-ը դրա վկայությունը համարում է այն, որ Բ. Ալիևը հուլիսի 16-ին աշխատանքից ազատեց Արտաքին գործերի փորձառու նախարար Էլմար Մամեդյարովին [7, 1-4]:

Հուլիսյան կարճատև զինված հակամարտությունը, Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարների իրարամերձ հայտարարությունները ցույց տվեցին, որ բանակցային գործընթացը մտել է փակուղի:

2020 թ. սեպտեմբերի 27-ի առավոտյան ադրբեջանական ցամաքային և օդային ուժերը հարձակում սկսեցին Արցախի շփման գծի երկայնքով: Այս անգամ նույնպես կողմերը միմյանց մեղադրում էին նախահարձակ լինելու մեջ: Ինչպես վկայում է «Ժամանակ»-ը, միջազգային վերլուծաբանները հակված են այն տեսակետին, որ ադրբեջանական կողմն է նախահարձակ եղել: Թերթը վկայակոչում է Կովկասի հարցով «Քարնեգի» հիմնադրամի վերլուծաբան Թոմաս դը Վալաիին, ըստ որի՝ Հայաստանը պատերազմ սկսելու շարժառիթ չուի [8, 1]:

«Ժամանակ»-ի դիտարկմամբ՝ Հայաստան-Թուրքիա հարաբերությունները «նոյնիսկ փակուղի է մը շատ սակելին է»: Լեռնային Ղարաբաղի հակամարտության ընթացքում Անկարան և Բաքուն հանդես են գալիս «նույնացած ձևով», մինչդեռ պաշտոնական Երևանը և Ստեփանակերտը «Բաքվին հավասարագոր բացահայտորեն հակազդում են նաև Անկարայի դեմ» [8, 1]:

Թերթի տեղեկություններով՝ թուրքական մամուլը, ռուսական աղբյուրները, ինչպես նաև «Ազատություն» ռադիոկայանը հայտնում են, որ Թուրքիայի արտգործնախարար Մ. Չավուշօղլուն և Ռուսաստանի Դաշնության արտգործնախարար Ս. Լավրովը հեռախոսազրույց են ունեցել, կոչ են արել կողմերին դադարեցնել ռազմական գործողությունները:

«Ժամանակ»-ը հարկ է համարում հիշեցնել, որ հուլիսյան իրադարձությունների ժամանակ Մոսկվան ամենաբարձր մակարդակով Անկարային զգուշացրել է «չձեռնարկել գործողություններ և չարել տարածաշրջանում իրավիճակը» [8, 1]:

Սեպտեմբերի 28-ի առավոտյան Ռուսաստանի արտգործնախարարությունը հանդես եկավ հայտարարությամբ՝ կոչ անելով բոլոր արտաքին և ներքին խաղացողներին ցուցաբերել զսպվածություն արցախյան հակամարտության հարցում:

«Ժամանակ»-ը գրում է, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը կոչ է արել միջազգային հանրությանը՝ Թուրքիային զերծ պահել հակամարտության ընթացքին միջամտելու հնարավորությունից: Ըստ թերթի՝ Թուրքիայի միջամտության կապակցությամբ Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը հայտարարել է. «Մեր դեմ կռվում է ոչ թե Ադրբեջանը, այլև Թուրքիան»: Հայաստանի արտգործնախարար Ջոհրպա Մնացականյանն իր հերթին «Ալ-Ջազիրա» հեռուստատեսությանը տված հարցազրույցի ժամանակ նշեց, որ «Ադրբեջանի բռնությունը իրականացվում է Թուրքիայի մեծածավալ աջակցությամբ» [8, 4]:

«Ժամանակ»-ն այնուհետև գրում է, որ ռազմական գործողությունները շարունակվում են, իսկ Արցախի և Հայաստանի իշխանությունների քայլերը ցույց են տալիս, թե ինչպես է հայ ժողովուրդը դիմագրավում ճակատագրական այս մարտահրավերին: Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց, որ ռազմական գործողությունները շարունակվում են Օմարից մինչև Արաքս,

«սա կենաց և մահու կռիվ է, այսօր մեզ համար ամենակարևորը անվտանգությունն է» [9, 4]:

Թերթի տեղեկություններով՝ Հայաստանի իշխանությունները պատերազմի օրերին հակամարտության կապակցությամբ քննարկումներ են անցկացնում միջազգային մի շարք կազմակերպությունների ու գործընկերների հետ: Մասնավորապես ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը վերջերս հեռախոսազրույց ունեցավ Գերմանիայի վարչապետ Անգելա Մերկելի հետ, ըստ որի՝ «հակամարտության խաղաղ կարգավորումը չունի այլընտրանք և հարցը պետք է լուծվի ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում» [9, 4]:

«Ժամանակ»-ը ռազմական գործողությունների ընթացքը համարում է «անկանխատեսելի»: Ուշադրությամբ հետևելով արցախյան հակամարտության վերաբերյալ միջազգային լրահոսին՝ թերթը նկատում է, որ որոշ լրատվամիջոցներ ու վերլուծաբաններ ենթադրում են կռիվների արագ դադարեցում, մյուսները չեն բացառում 1990-ական թվականների սկզբի նման երկարատև պատերազմ, քանի որ «Ադրբեջանը կրակ է բացել նաև Վարդենիսի ուղղությամբ» [9, 4]:

Թերթը տեղեկացնում է, որ Լեռնային Ղարաբաղում ընթացող պատերազմի կապակցությամբ Թուրքիայի խորհրդարանի 5 կուսակցություններից 4-ը օրերս հանդես եկան Հայաստանի զինված ուժերին դատապարտող և Ադրբեջանին սատարող համատեղ հայտարարությամբ: Ըստ թերթի՝ նրանում ասվում է. «Մենք կիսախուսենք Ադրբեջանի պաշտպանությունը, որը բխում է միջազգային իրավունքի օրինական ինքնապաշտպանության իրավունքից, որի նպատակն է պաշտպանել իր ժողովրդին և պահպանել տարածքային ամբողջականությունը» [9, 1]:

«Ժամանակ»-ն այս հայտարարության կապակցությամբ որևէ դիրքորոշում չի դրսևորում: Թերթն այն չի դատապարտում, կամ քննադատում որպես հակահայկական բացահայտ դրսևորում, այլ բավարարվում է՝ սույլ տեղեկացնելով թուրքական խորհրդարանում արցախյան հակամարտությունում Ադրբեջանին սատարելու պատրաստակամության մասին:

«Մեծերը գործի մեջ» հոդվածում «Ժամանակ»-ն անդրադառնում է նաև ռուսական լրատվամիջոցների հրապարակումներին: Թերթը նշում է, որ ըստ ռուսական լրատվամիջոցների՝ Հայաստանը և Ադրբեջանը պատրաստ չեն երկարատև ռազմական գործողությունների: Ռուսական «Նեգավիսիմայա Գագետա»-ն գտնում է, որ այս փուլում Ֆաբրն և Երևանը ստուգում են Մոսկվայի չեզոքությունը: «Կոմերսանտ» թերթը ծավալուն հոդված է հրապարակել Արցախում տիրող իրավիճակի վերաբերյալ [9, 4]:

«Ժամանակ» օրաթերթն «Օրվա մտորումներ» բաժնում զետեղում է «Արցախի հակամարտությունը դեպի ո՞ր կամ մոտ ենք արդյո՞ք խաղաղության» հոդվածը: Հեղինակը պատահական չի համարում Ադրբեջանում արտգործնախարար Է. Մամեդյարովի պաշտոնից հեռացումը, քանի որ նա Արցախյան խնդրով «խաղաղության» ջատագով էր: Նա նշում է, որ գուցե իրեն քննադատեն նման մտքի համար, սակայն ակնհայտ է, որ «հրաժարված կամ հեռացված նախարարը կարևոր ավանդ ունի երկու երկրների՝ Ադրբեջանի և Հայաստանի միջև բանակցությունների մեջ» [10, 1-4]: Հոդվածագրի կարծիքով՝ «այս փուլում հարց է առաջանում՝ արդյո՞ք մենք այսօր այդքան հեռու ենք ցանկալի խաղաղությունից և բանակցությունների հիմնարար կամուրջը մի թե՛ այրված է» [10, 4]:

Հետագա հրապարակումներում «Ժամանակ»-ը կարևորում է հատկապես Իրանի դիրքորոշումն Արցախում ընթացող պատերազմի հարցում: Թերթն անդրադառնում է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հեռախոսազրույցին՝ Իրանի նախագահ Հասան Ռուհանի և Եվրոպական միության խորհրդի նախագահ Շարլ Միշելի հետ, ինչպես նաև Իրանի արտգործնախարարության խոսնակ Սայիդ Խաթիվգադեի հայտարարությանը: Թերթը գրում է, որ խոսնակը, ներկայացնելով պաշտոնական Թեհրանի դիրքորոշումը, հստակ շեշտել է հետևյալը. Իրանը, ելնելով սեփական անվտանգության խնդրից, ոչ մի

պարագայում թույլ չի տա ահաբեկիչների տեղակայում իր հյուսիսային սահմանի հարակից տարածքներում: Նա միաժամանակ ընդգծել է, որ բախումների տեղափոխումը Կովկաս շատ ավելի մեծ աղետի կհանգեցնի տարածաշրջանում, քան դարաբաղյան հակամարտությունը:

«Ժամանակ»-ի տեղեկություններով՝ Երուսաղեմի հայոց պատրիարք Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանը Արցախի ճակատագրով մտահոգ նամակ է ուղարկել Իսրայելի նախագահ Ռուվեն Ռիվլինին: Պատրիարքը խնդրել է Իսրայելիին դադարեցնել զենքի մատակարարումը Ադրբեջանին, քանի որ այն օգտագործվում է խաղաղ բնակչության դեմ: «Նման գործելակերպը,– գրում է պատրիարքը,– ցույց է տալիս, որ խաղաղաստեղծ դիրքորոշում որդեգրելու փոխարեն Իսրայելն օգնում է Ադրբեջանին վերակենդանացնելու իր թշնամանքը հայերի դեմ» [11, 1]:

Պարբերաբար անդրադառնալով արցախյան հակամարտության վերաբերյալ միջազգային կազմակերպությունների, պետությունների ղեկավարների ու արտասահմանյան լրատվամիջոցների հրապարակումներին՝ «Ժամանակ» օրաթերթը մի կողմից նպատակ է հետապնդում ավելի բազմազան ու հանգամանալից դարձնել իր հրապարակումները, մյուս կողմից փորձում է կողմորոշվել, թե ինչպիսին է նրանց դիրքորոշումը, ինչ նպատակ են նրանք հետապնդում այս կամ այն հայտարարությունն անելիս: Թերթն այս հարցերի վերաբերյալ իր դիրքորոշումը հստակ չի արտահայտում, այլ ավելի շատ բավարարվում է արցախյան հակամարտության վերաբերյալ մեծ թվով լուրեր հրապարակելով:

«Ժամանակ»-ը գրում է, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների ղեկավարներ ԱՄՆ նախագահ Դ. Թրամփը, ՌԴ նախագահ Վ. Պուտինը և Ֆրանսիայի նախագահ Է. Մակրոնը հոկտեմբերի 1-ին հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որպեսզի ռազմական գործողությունները անհապաղ դադարեցվեն առանց նախապայմանների, և հակամարտող կողմերը շարունակեն բանակցությունները:

«Ժամանակ»-ն անդրադառնում է Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ «Ալ Ջազիրա» հեռուստաընկերությանը տված հարցազրույցին և մեջբերում նրա հետևյալ հայտարարությանը՝ «Մեր խնդիրը պաշտպանվելն է, որովհետև Ադրբեջանն է հարձակվել» [12, 4]: Ըստ թերթի՝ գրեթե նույն միտքը կրկնում է Հայաստանի Հանրապետության արտգործնախարար Ջոհրաբ Մնացականյանը: Նա «Sky News»-ին տված հարցազրույցի ժամանակ նշեց, որ «Հայաստանը որևէ նախապայման չի դնում, Ադրբեջանն է փորձում խնդիրը լուծել ուժային մեթոդներով և ակնկալում է Հայաստանին և Արցախին ստիպել միակողմանի զիջման, որը բացառված է» [12, 4]:

Թերթի «Օրվա մտորումներ» բաժնի «Անցած երեսուն տարիների թերացումներով հանդերձ ձգտել խաղաղության ճանապարհի» հոդվածում հեղինակը նշում է, որ 30 տարվա վաղեմություն ունեցող հակամարտությունը կարող է լուծվել միայն «ո՛չ հաղթանակ, ո՛չ պարտություն» սկզբունքով: Հեղինակը մեջբերում է «Քարնեգի» հիմնադրամի գիտաշխատող Թոմաս դը Վալայի հոդվածը, ըստ որի՝ իրավիճակը խորացնում է երկու հանգամանք. նախ այն, որ «Թուրքիան բացահայտ աջակցելով Ադրբեջանին, փոխում է հակամարտության գոտում աշխարհաբաղաբալկան հավասարակշռությունը, և երկրորդ՝ ԱՄՆ-ը զանազան պատճառներով իրեն հեռու է պահում հակամարտությունից» [13, 1-2]:

«Ժամանակ»-ը պարբերաբար ընդգծում է, որ հայկական և ադրբեջանական տեղեկատվական աղբյուրները մշտապես հակասական տեղեկություններ են հաղորդում պատերազմի վերաբերյալ: Պաշտոնական Բաքուն հայտարարում է, որ ադրբեջանական զորքերը ազատագրել են Մատաղիսը և Ջաբրայիլը, մինչդեռ հայկական կողմը հերքում է այդ լուրերը: Հայկական և ադրբեջանական տեղեկատվության հակասություններն այնպիսի տպավորություն են ստեղծում, եզրակացնում է «Ժամանակ»-ը, որ «մարտերի ընթացքը հարափոփոխ ձևի մեջ է մտնում» [14, 1]:

Արցախյան պատերազմի ամբողջ ընթացքը լուսաբանելիս «Մամանակ»-ը բազմիցս ընդգծում է այն իրողությունը, որ հայկական և ադրբեջանական լրատվամիջոցները մշտապես հակասական լուրեր են ներկայացնում տեղի ունեցող կռիվների մասին: Թերթը չի սխալվում իր դիտարկման մեջ, քանի որ 2020 թ. նոյեմբերի 9-ի զինադադարի կնքումից հետո պարզ դարձավ, որ հայ հանրությունը Հայաստանում, Արցախում և սփյուռքում 44 օր շարունակ Հայաստանի հանրային հեռուստատեսության պաշտոնական լուրերից պատերազմի վերաբերյալ ցանկացած լուրից հետո հավաստիացում էր ստանում՝ «հաղթելու ենք», բայց ստացվեց ճիշտ հակառակը:

«Մամանակ» թերթը ողջ հայության հետ միասին 44 օր շարունակ ապատեղեկատվություն էր ստանում հայկական լրատվամիջոցներից, որոնց լուրերի հավաստիությանը չէր կասկածում: Այդ լուրերի շարքին է պատկանում մասնավորապես 2020 թ. հոկտեմբերի 5-ին հայկական կողմի հայտարարությունն այն մասին, որ հայկական օդուժի հարվածից շարքից դուրս է եկել Գանձակի օդանավակայանը: Թերթը գրում է, որ ադրբեջանական կողմը Գանձակի օդանավակայանի ռմբակոծման վերաբերյալ ոչինչ չի հայտնում, այլ միայն տեղեկացնում է, որ հայկական կողմը հրթիռակոծել է «Գյանջայի խաղաղ բնակչությանը» [14, 1]:

«Մամանակ»-ն «Օրվա մտորումներ» բաժնում ներկայացնում է գերմանացի վերլուծաբան Ալեքսանդր Ռարի վերլուծությունը, որի համոզմամբ Լեռնային Ղարաբաղի հարցով ճիշտ կլինի նոր պայմանավորվածություն ձեռք բերեն Թուրքիան և Ռուսաստանը: Ըստ նրա Եվրոպական միությունը չգիտի՝ ինչպես հանգցնել հետխորհրդային «հրդեհները»: Ինչ վերաբերում է Ամերիկայի Միացյալ Նահանգներին, ապա պաշտոնական Վաշինգտոնն ունի գուսպ և հավասարակշռված դիրքորոշում, Ֆրանսիան բացահայտ Հայաստանի կողքին է, իսկ գերմանական մամուլը գրում է, որ Լեռնային Ղարաբաղը միջազգային իրավունքով Ադրբեջանին է պատկանում:

Թերթի դիտարկմամբ՝ վերջին 10 տարվա ընթացքում գերմանական քաղաքագետները, վերլուծաբանները, գանգվածային լրատվամիջոցները նման մտեցում չեն դրսևորել: Այս «նոր» մտեցումն, ըստ թերթի, կապված է Դրիմի խնդրի հետ: Եվրոպացիները վախենում են, որ եթե իրենք ճանաչեն Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ միավորվելը, ապա նույն տրամաբանությամբ Դրիմը պետք է ճանաչել Ռուսաստանի մաս, որի հետ միավորվել են հանրաքվեի արդյունքում [14, 1]:

Ստամբուլում լույս տեսնող «Մամանակ»-ը մշտապես անդրադառնում է թուրքական մամուլի հրապարակումներին: Թերթը մեջբերում է թուրքական «Էվրենսել» թերթի կայքէջից «Ադրբեջանի ձախ երիտասարդություն» խմբավորման հայտարարությունը, որտեղ մասնավորապես ասվում էր. «Մեր թշնամին հայերը չեն, այլև իշխանությունները, որոնք մեզ կեղեքում են» [14, 1-4]:

Թուրքական լրատվամիջոցներին հղում անելով՝ «Մամանակ»-ը գրում է, որ հոկտեմբերի 5-ին ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգն այցելել է Անկարա, որտեղ պաշտոնական քննարկումներ է ունեցել Լեռնային Ղարաբաղում ընթացող իրադարձությունների կապակցությամբ: Ըստ թերթի՝ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ Թուրքիայի արտգործնախարար Մ. Չավուշօղլուն հայտարարեց, որ բարոյական և իրավական առումով պետք է աջակցել Ադրբեջանին:

Անդրադառնալով պաշտոնական Անկարայի այս հայտարարությանը՝ «Մամանակ»-ը գրում է, որ Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևը ռուսական TRT հեռուստաընկերությանը տված հարցազրույցում շեշտել է «Թուրքիայի պարտադիր մասնակցությունը ապագա հաշտության գործընթացին»: Նա դա պատճառաբանել է նրանով, որ «Թուրքիան ուժեղ պետություն է, մեծ ներուժով, մեր հարևանն է, Հայաստանի հարևանն է, Հարավային Գովկասի հարևանն է» [15, 1]:

«Մամանակ»-ը կարևորում է հոկտեմբերի 5-ին Հայաստանի Հանրապետության վար-

չապետ Ն. Փաշինյանի և Ռուսաստանի Դաշնության նախագահ Վ. Պուտինի չորրորդ անգամ ունեցած հեռախոսազրույցն Արցախյան պատերազմը դադարեցնելու հարցով: Թերթը կարևորում է նաև Ռուսաստանի Դաշնության նախագահի մամուլի խոսնակ Դ. Պեսկովի հայտարարությունն, ըստ որի՝ Վ. Պուտինն առայժմ չի նախատեսում դարաբաղյան խնդիրը քննարկել Ռ. Էրդողանի կամ Ի. Ալիևի հետ:

«Ժամանակ»-ն անդրադառնում է Հայաստանի Հանրապետության վարչապետ Ն. Փաշինյանի անգլիական BBC հեռուստաընկերությանը տված հարցազրույցին, որի ժամանակ նա ասել է. «Այո՛, Արցախը Հայաստան է, այն միշտ եղել է հայկական տարածք, որի բնակչության ավելի քան 80 %-ը կազմել են հայերը: Եվ այսօր էլ այդպես է: Ադրբեջանն է ցանկալում, որ հայերն այնտեղ չապրեն, և այդ պատճառով էլ անհաբեկիչներ է բերել, որոնք հարձակվում են Արցախի վրա» [16, 1-4]:

Թերթն այնուհետև հայտնում է, որ հոկտեմբերի 10-ի առավոտյան Ռուսաստանի միջնորդությամբ Հայաստանի և Ադրբեջանի միջև ձեռք բերվեց մարդասիրական հրադադարի մասին պայմանավորվածություն, որը պետք է գործեր կեսօրից, սակայն ժամը 12:05-ին ՀՀ Պաշտպանության նախարարությունը հայտարարեց, որ «անտեսելով հայտարարված զինադադարը, Ադրբեջանն իրականացրել է նոր հարձակում» [17, 1]:

«Օրվա մտորումներ» բաժնում «Ժամանակ»-ն անդրադառնում է հրադադարի մասին ձեռք բերված պայմանավորվածությանը և նշում. «այս ձևաչափով տեղի ունեցած բանակցային գործընթացն աշխարհին ցույց տվեց, որ Կովկասի «տերն ու տիրակալը» Ռուսաստանն է, որը Հայաստանի «մեծ եղբայրն է» և Ադրբեջանի «հին բարեկամը» [18, 1]:

2020 թ. հոկտեմբերին առաջին հրադադարի հաստատումից հետո առավել ինտենսիվ շարունակվեցին ռազմական գործողությունները: Պատերազմի ամբողջ ընթացքում միջազգային հանրությունը կողմերին կոչ էր անում ցուցաբերել զսպվածություն, մինչդեռ Թուրքիան բացահայտ աջակցում էր Ադրբեջանին, ինչն էլ փոխեց ուժերի հավասարակշռությունը արցախյան պատերազմի թատերաբեմում:

Պատերազմի սկզբից մեկ ամիս անց Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևը ամերիկյան «Fox News»-ին տված հարցազրույցի ժամանակ հայտարարեց, որ Ադրբեջանը պատրաստ է հրադադարի, եթե Հայաստանն ապացուցի, որ բռնել է ճիշտ ճանապարհ: «Ժամանակ»-ը թերահավատորեն է վերաբերվում Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի այս հայտարարությանը: Թերթն իր վերաբերմունքն արտահայտում է Նիկոլ Փաշինյանի մամուլի խոսնակ Մանե Գրիգորյանի հայտարարությամբ, ով, ըստ էության, հերքում էր Ի. Ալիևին: Նա հայկական լրատվամիջոցներին հայտնեց, որ «իրականության մեջ Ադրբեջանը հրաժարվում է ձեռք բերված պայմանավորվածություններից, դրսևորելով առավելապաշտական մոտեցում» [19, 1]:

«Ժամանակ»-ն իրատեսորեն նկատում է, որ 44-օրյա պատերազմի ողջ ընթացքում հայկական և ադրբեջանական լրատվամիջոցների տեղեկությունները միմյանց չեն համապատասխանում: Նոյեմբերի 6-ին հայկական կողմը պնդում էր, որ Շուշիի համար մարտերը շարունակվում են, իսկ ադրբեջանական կողմը զուգահեռ հայտարարում էր, որ Շուշին ազատագրել է: «Ժամանակ»-ն «Օրվա մտորումներ» բաժնում ներկայացնելով երկու կողմի տեղեկությունները, գրում է. «Հուսկ, երբ որ յստականայ Շուշիի պարագան, ապա ինքնաբերաբար բեկումնային պահ մը սահմանված պիտի ըլլայ Լեռնային Դարաբաղի առկայ լայնածաւալ պատերազմի ընթացքին տեսակետ» [20, 4]:

2020 թվականի նոյեմբերի 9-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը և Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը ստորագրեցին համատեղ հայտարարություն, ըստ որի՝ նոյեմբերի 10-ից Մոսկվայի ժամանակով 00:00-ից լիակատար դադարեցվում էին բոլոր ռազմական գործողությունները: Ալևայի (Ադղամի) շրջանը վերադարձվում է Ադրբեջանի Հանրապետությանը մինչև 2020 թ. նոյեմբերի 20-ը: Լեռնային

Ղարաբաղի շփման գծի և Բերձորի (Լաչինի) միջանցքի երկայնքով տեղակայվելու են Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորքերը 5 տարի ժամկետով, հերթական հնգամյա ժամանակահատվածով երկարաձգելու իրավունքով, եթե կողմերից մեկը ժամկետի ավարտից 6 ամիս առաջ չհայտարարի այդ դրույթի կիրառումը դադարեցնելու մտադրության մասին: Մինչև նոյեմբերի 15-ը Հայաստանի Հանրապետությունը պետք է վերադարձնէր Քարվաճառի շրջանը (հանձնվեց նոյեմբերի 20-ին), իսկ մինչև 2020 թ. դեկտեմբերի 1-ը՝ Լաչինի շրջանը, պահպանելով Լաչինի միջանցքը 5 կիլոմետր երկարությամբ [21, 1]:

2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ պայմանագրով ավարտվեց 44-օրյա պատերազմը, որն անդառնալի ծանր հետևանքներ ունեցավ Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի համար: Մենք ունեցանք 5 հազարից ավելի զոհ, 10 հազարից ավելի վիրավորներ, կորցրինք Արցախի տարածքի մոտ 75 տոկոսը: Անդրադառնալով պատերազմի արդյունքներին «Ժամանակ»-ն այս դառը իրողությունը որակում է որպես պատմական ջրբաժան, Բաքվի մեջ՝ տոնախմբություն, իսկ Երևանում՝ քառս:

Եզրակացություն

Հանգամանորեն անդրադառնալով արցախյան 44-օրյա պատերազմին՝ «Ժամանակ» օրաթերթը բարձր է գնահատում հայության համախմբված պայքարը: Թերթը հայաստանյան և արտասահմանյան տարբեր լրատվության միջոցների հրապարակումներով հանգամանորեն լուսաբանում է պատերազմի ընթացքը: Այդ հրապարակումներն ընդգծված ծայրահեղ հայամետ բնույթ չունեն, թեև ակնհայտ է, որ թերթի համակրանքն ամբողջությամբ արցախցիների արդարացի պայքարի կողմն է:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2024.1-172>

Գրականություն

1. «Հայ գրատպություն և գրքարվեստ», Երևան, «Հայկական հանրագիտարան» հրատարակչություն, 2015:
2. «Ժամանակ», 2020, 08 հուլիսի, №12310:
3. «Ժամանակ», 2020, 11 հուլիսի, №12311:
4. «Ժամանակ», 2020, 13 հուլիսի, №12314:
5. «Ժամանակ», 2020, 14 հուլիսի, №12315:
6. «Ժամանակ», 2020, 18 հուլիսի, №12318:
7. «Ժամանակ», 2020, 14 սեպտեմբերի, №12341:
8. «Ժամանակ», 2020, 28 սեպտեմբերի, №12353:
9. «Ժամանակ», 2020, 29 սեպտեմբերի, №12354:
10. «Ժամանակ», 2020, 30 սեպտեմբերի, №12355:
11. «Ժամանակ», 2020, 01 հոկտեմբերի, №12356:
12. «Ժամանակ», 2020, 02 հոկտեմբերի, №12357:
13. «Ժամանակ», 2020, 03 հոկտեմբերի, №12358:
14. «Ժամանակ», 2020, 05 հոկտեմբերի, №12359:
15. «Ժամանակ», 2020, 06 հոկտեմբերի, №12360:
16. «Ժամանակ», 2020, 07 հոկտեմբերի, №12361:
17. «Ժամանակ», 2020, 10 հոկտեմբերի, №12364:
18. «Ժամանակ», 2020, 12 հոկտեմբերի, №12365:
19. «Ժամանակ», 2020, 26 հոկտեմբերի, №12377:
20. «Ժամանակ», 2020, 08 նոյեմբերի, №12383:
21. «Ժամանակ», 2020, 10 նոյեմբերի, №12390:

Отклики на 44-дневную Карабахскую войну в ежедневной газете «Жаманак»

Татьяна Оганян

Резюме

Ключевые слова: *Карабахский конфликт, международный отклик, армянская печать в Константинополе, переговорный процесс, Минская группа ОБСЕ, Азербайджан, Турция*
44-дневная Карабахская война 2020 года получила широкий отклик в издающейся в Турции ежедневной газете «Жаманак» («Время»).

Газета описывает события, происходящие в Армении и Арцахе, на основе информации, полученной из Армении, а также из публикаций азербайджанских и международных СМИ.

Публикации в газете «Жаманак» показывают, что авторы статей полностью осознают арцахскую проблему и подробно описывают причины начала 44-дневной войны, подчеркивая, что июльские события и заявления Республики Армения исчерпали переговорный процесс и конфликт стал неизбежен.

На протяжении всей войны «Жаманак», предоставляя информацию, сообщаемую армянскими, азербайджанскими и международными СМИ, показывает, что Азербайджан является агрессивной стороной, отмечая, что у Армении нет мотивов для начала войны.

«Жаманак» считает непредсказуемым ход боевых действий с первых дней войны, указывая на возможность как длительной войны наподобие первой Арцахской войны, так и на вероятность стремительного прекращения боевых действий.

Несмотря на вполне ожидаемую критику, «Жаманак» не считает отставку министра иностранных дел Азербайджана Э. Мамедъярова совпадением, отмечая, что он был сторонником мира и внес большой вклад в переговоры между Азербайджаном и Арменией.

Хотя газета издается в Турции, она представляет ход 44-дневной войны с проармянской позиции и скорбит по поводу ее итогов. Через несколько дней после объявления о прекращении огня газета сообщает, что «страна находится в глубокой тьме».

The Response to the 44-day Karabakh War in the “Zhamanak” Daily Newspaper

Tatyana Ohanyan

Summary

Key words: *Karabakh conflict, international reaction, Armenian Press in Constantinople, negotiation process, OSCE Minsk Group, Azerbaijan, Turkey*

The 44-day Karabakh war of 2020 received a wide response from the “Zhamanak” newspaper published in Turkey.

The newspaper described the events taking place in Armenia and Artsakh, based on information received from Armenia, as well as from various publications of Azerbaijani and international media.

The publications of “Zhamanak” show that the newspaper is totally knowledgeable about the Artsakh problem. The newspaper describes in detail the reasons for the start of the 44-day war, showing that the July events and statements of the Republic of Armenia have exhausted negotiations and the conflict was already inevitable.

Throughout the war, “Zhamanak”, by providing information reported by Armenian, Azerbaijani and international media, shows that Azerbaijan is a pre-aggressive party, emphasizing the fact that Armenia has no motives for starting a war.

From the first days of the war “Zhamanak” considers the course of hostilities unpredictable, noting either the possibility of a long war, similar to the first Artsakh war, or the probability of a quick cessation of hostilities.

Despite the fact of being criticized, “Zhamanak” does not consider the resignation of Azerbaijani Foreign Minister E. Mammadyarov a coincidence, highlighting that he was a peace supporter, who made a great contribution to the negotiations between the two countries of Azerbaijan and Armenia.

Although the newspaper is published in Turkey, it presents the course of the 44-day war from a pro-Armenian perspective and laments its outcome. A few days after the ceasefire was announced, the following statement appeared in the newspaper: “the country is in deep darkness”.

Ներկայացվել է 13.10.2023 թ.

Գրախոսվել է 28.11.2023 թ.

Ընդունվել է տպագրության 30.05.2024 թ.